Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Ժամանակ տրամադրեք Փրկիչին

Ստոտենում է ևս մեկ Սուրբ Ծնունդ և դրա հետ միասին ևս մեկ նոր տարի: Թվում է, թե երեկ էր, որ մենք տոնում էինք Փրկիչի ծնունդը և որոշումներ կայացնում:

Արդյո՞ք այս տարի մենք որոշել ենք մեր կյանքում ժամանակ տրամադրել և մեր սրտերում տեղ հատկացնել Փրկիչին: Անկախ այն բանից, թե որքանով է մինչ այժմ մեզ հաջողվել իրականացնել նման որոշումները, ես վստահ եմ, որ մենք բոլորս էլ ցանկանում ենք անել ավելին: Սուրբ Ծննդյան այս օրերը կատարյալ ժամանակ են, որպեսզի քննենք և վերսկսենք մեր ջանքերը:

Մեր զբաղված կյանքում, երբ բազում այլ բաներ մրցում են գրավելու մեր ուշադրությունը, խիստ կարևոր է, որ մենք գիտակից, նվիրված ջանքեր գործադրենք՝ բերելու Քրիստոսին մեր կյանք և մեր տուն: Եվ անհրաժեշտ է, որ մենք Արևելքի Իմաստունների պես կենտրոնացած մնանք Նրա աստղի վրա և գանք «նորան երկրպագելու»:[1]

Բոլոր ժամանակներում Հիսուսի ուղերձը նույնն է եղել: Գալիլեայի ծովափին Պետրոսին և Անդրեասին Նա ասաց. «Իմ ետեւից եկէք»:[2] Փիլիպոսին Նա կանչեց. «Իմ ետեւից եկ»:[3] Եվ մաքսատանը նստած ղևտացուն տվեց հրահանգ. «Իմ ետեւից եկ»:[4] Եթե մենք միայն լսենք, ինձ և ձեզ կտրվի այդ նույն կանչող հրավերը. «Հետևեք ինձ»:[5]

Եթե մենք այսօր քայլենք Նրա ոտնահետքերով և հետևենք Նրա օրինակին, մենք կունենանք ուրիշների կյանքն օրհնելու հնարավորություններ: Հիսուսը մեզ հրավիրում է նվիրել մեր անձերը. «Ահա, Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը»:[6]

Կա՞ մեկը, ում դուք պետք է ծառայություն մատուցեք այս Սուրբ Ծննդյան օրերին: Կա՞ մեկը, ով սպասում է ձեր այցելությանը:

Տարիներ առաջ ես այցելեցի մի ծեր այրու՝ շնորհավորելու նրա Սուրբ Ծնունդը: Մինչ մենք խոսում էինք, հնչեց դռան զանգը: Դռան մոտ կանգնած էր մի շատ զբաղված և հայտնի բժիշկ: Նրան չէին կանչել, այլ նա պարզապես ոգեշնչում էր ստացել այցելելու մի հիվանդի, ով միայնակ էր:

Այս ժամանակաշրջանում սահմանափակումներ ունեցողների սրտերը ձգտում են և փափագում ունենալ Սուրբ Ծննդյան այցելություններ: Սուրբ Ծննդյան մի օր, մինչ այցելել էի խնամքի կենտրոն, ես նստել և խոսում էի հինգ ծեր կանանց հետ, որոնցից ամենամեծը 101 տարեկան էր: Նա կույր էր, սակայն ճանաչեց իմ ձայնը:

«Եպիսկոպոս, դուք մի փոքր ուշացաք այս տարի», - ասաց նա: «Կարծում էի, դուք այլևս չէիք գա»:

Մենք հիանալի ժամանակ անցկացրեցինք միասին: Այնուամենայնիվ, նրանցից մեկը կարոտով նայում էր պատուհանից դուրս և նորից ու նորից կրկնում. «Ես գիտեմ, որ իմ տղան այսօր կգա ինձ տեսնելու»: Ես մտածում էի, թե արդյոք նա կգար, որովհետև եղել էին Սուրբ Ծննդյան օրեր, երբ նա չէր էլ զանգել:

Այնուամենայնիվ, այս տարի մենք ունենք ժամանակ առաջարկելու օգնության ձեռք, սիրառատ սիրտ և հոժար հոգի, այլ խոսքերով ասած՝ հետևելու մեր Փրկիչի օրինակին և ծառայելու այնպես, ինչպես Նա կցանկանար, որ մենք ծառայենք: Երբ մենք ծառայենք Նրան, մենք չենք կորցնի մեր հնարավորությունը, ինչպես արեց հին օրերի իջևանատերը,[7] ժամանակ տրամադրելու Նրան մեր կյանքում և տեղ հատկացնելու Նրա համար մեր սրտերում:

Կարո՞ղ ենք մենք ընկալել դաշտում մնացող հովիվներին հրեշտակի կողմից տրված ուղերձի հիանալի խոստումը. «Մեծ ուրախութիւն եմ աւետում ձեզ: . . . Այսօր ձեզ Փրկիչ ծնուեցաւ . . ., որ է Քրիստոս Տէրը»:[8]

Սուրբ Ծննդյան նվերներ միմյանց տալիս թող որ մենք հիշենք, գոհանանք և ստանանք բոլոր պարգևներից այդ ամենամեծ պարգևը՝ մեր Փրկիչի և Քավիչի պարգևը, որպեսզի մենք հավերժական կյանք ունենանք:

«Քանզի ի՞նչ օգուտ մարդուն, եթե նրան պարգև է տրվում, և նա չի ընդունում այդ պարգևը: Ահա, նա չի ուրախանում այն ամենով, ինչ տրված է իրեն, ոչ էլ ուրախանում է այդ պարգևը տվողով»:[9]

Թող որ մենք հետևենք Նրան, պատվենք Նրան և մեր կյանքում ընդունենք Նրա տված պարգևները, ինչպես ասել է հայր Լեքին՝ «հավերժորեն օղակված [լինենք] նրա սիրո բազուկների մեջ»:[10]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս Բ.2:
2. Մատթեոս Դ.19:
3. Հովհաննես Ա.43:
4. Մատթեոս Թ.9.
5. Վարդապետություն և Ուխտեր 38.22:
6. Վարդապետություն և Ուխտեր 64.34:
7. Տես Ղուկաս Բ.7:
8. Ղուկաս Բ.10-11:
9. Վարդապետություն և Ուխտեր 88.33:
10. 2 Նեփի 1.15:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Մոնսոնը մեզ կոչ է անում «գիտակից, նվիրված ջանքեր գործադրել՝ բերելու Քրիստոսին մեր կյանք և մեր տուն»: Խորհեք, թե ինչպես կարող եք քննարկել նրանց հետ, ում ուսուցանում եք, թե ինչպես կարող են անհատապես և որպես ընտանիք գործադրել այս գիտակից ջանքերը: Խնդրեք նրանց մտածել որոշակի անձնավորության կամ ընտանիքի մասին, ում նրանք կարող են այցելել կամ ծառայել այս Սուրբ Ծնունդին: «Այնուամենայնիվ, այս տարի մենք ունենք ժամանակ առաջարկելու օգնության ձեռք, սիրառատ սիրտ և հոժար հոգի»:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Սուրբ Ծննդյան օրերին ծառայելու ուղիները

Նախագահ Մոնսոնը ժամանակ է տրամադրում այցելելու ծերերին և խնամքի կենտրոններում ապրողներին, հատկապես Սուրբ Ծննդյան օրերին: Նա նշել է, որ կան մարդիկ, ովքեր երջանիկ են, քանի որ այցելուներ են ունեցել, մինչ ուրիշները լոկ հույս ունեն այցելուներ ունենալու, ովքեր երբեք չեն գալիս: Կան մարդիկ, ովքեր սպասում են ցանկացած մեկին. միգուցե այս Սուրբ Ծննդյան օրերին *դուք* լինեք այդ ցանկացած մեկը:

Ահա ընդամենը մի քանի եղանակներ պարունակող ցանկ, որը կօգնի ձեզ համոզվել, որ ոչ ոք միայնակ չի զգում այս Սուրբ Ծննդյան օրերին: Ցանկալի է, որ մտածեք ավելի շատ եղանակների մասին, թե ինչպես կարող եք ձեր համայնքում օգնության հասնել այս օրերին: «Կա՞ մեկը, ով սպասում է ձեր այցելությանը»:

- Պատրաստեք Սուրբ Ծննդյան բացիկներ, որպեսզի ուղարկեք ձեր ծխի կամ ճյուղի միսիոներներին, միայնակ և ծեր անդամներին:
- Ձեր կամավոր ծառայություններն առաջարկեք տեղի համայնքի կազմակերպությունում:
- Ձեր ընկերներին և հարևաններին տվեք Մորմոնի Գրքի մի օրինակ՝ որպես Սուրբ Ծննդյան նվեր:
- Այցելեք ձեր ծխի կամ ընտանիքի ծերերին:
- Պատրաստեք քաղցրավենիք՝ ձեր հարևաններին տալու համար:

ԵՐԵԽԱՆԵՐ

Հետևել լույսին

Երբ Հիսուսը ծնվեց, իմաստունները Նրան նվերներ բերեցին: Նրանք հետևեցին երկնքի նոր, պայծառ աստղին: Ի՞նչ նվեր դուք կարող եք տալ Հիսուսին այս Սուրբ Ծնունդին:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15:
Թարգմանության հաստատումը. 6/15: *First Presidency Message, December 2015*-ի թարգմանությունը: Armenian 12592 201

Հիսուս Քրիստոսի աստվածային հատկանիշները. կարեկցող և բարի

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Փրկիչի աստվածային հատկանիշները հասկանալը ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատը Նրա հանդեպ և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք՝ reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սա Այցելող ուսուցիչների ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկիչի աստվածային հատկանիշներին:

«Սուրբ գրքերում կարեկցանքը նշանակում է բառացիորեն «ցավը կիսել»: Դա նշանակում է նաև վշտակից լինել, գթալ և ողորմություն ցուցաբերել մեկի հանդեպ»:[1]

«Հիսուսը կարեկից մտահոգության բազմաթիվ օրինակներ է տվել», - ասել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: «Բեթհեզդայի ավազանի մոտի անդամալույծը, շնության մեջ բռնված կինը, Հակոբի ջրհորի մոտի կինը, Հայրոսի դուստրը, Ղազարոսը՝ Մարիամի և Մարթայի եղբայրը, յուրաքանչյուրը ներկայացնելով Երիքովի ճանապարհի զոհին: Յուրաքանչյուրն ուներ օգնության կարիք:

Բեթհեզդայի անդամալույծին Հիսուսն ասաց. «Վեր կաց, մահիճդ առ և ման եկ»: Մեղավոր կնոջը տրվեց խորհուրդ. «Գնա, եւ այսուհետեւ մեղք մի գործիր»: Որպեսզի օգներ այն կնոջը, ով եկել էր ջուր տանելու, նա պատրաստեց մի ջրհոր, «որ յաւիտենական կյանքի համար կբղխէ»: Հայրոսի մահացած դստերը հրաման տրվեց. «Ով աղջիկ, քեզ եմ ասում, վեր կաց»: Թաղված Ղազարոսին ասվեց. «Դուրս եկ»:

Փրկիչը որպես կարեկցանք միշտ տալիս էր անսահման հնարավորություններ: . . . Թող որ մենք բացենք մեր սրտի դռները, որ Նա՝ ճշմարիտ կարեկցանքի կենդանի օրինակը, կարողանա ներս մտնել»:[2]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Մաղմոս ՃԽԵ.8, Զաքարիա Է.9, Ա Պետրոս Գ.8, Մոսիա 15.1, 9, 3 Նեփի 17.5–7

Սուրբ գրություններից

«Իմ ամուսինն ու ես ծնկի էինք իջել մեր 17-ամյա դստեր կողքին և աղերսում էինք նրա կյանքի համար», - ասել է Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական Լինդա Շ. Ռիվսը: «Պատասխանը ոչ էր, սակայն . . . մենք գիտեինք . . . որ . . . [Փրկիչը] կարեկցանք է զգում մեր հանդեպ մեր վշտի ու ցավի պահին»:[3]

«Փրկիչի կյանքի իմ ամենասիրած պատմություններից մեկը Ղազարոսի պատմությունն է: Սուրբ գրությունները մեզ ասում են, որ «Հիսուսը սիրում էր Մարթային, . . . նրա քրոջը [Մարիամին], և [նրանց եղբորը] Ղազարոսին»:[4] Երբ Ղազարոսը հիվանդացավ. Հիսուսին լուր ուղարկեցին այդ մասին, սակայն երբ Նա եկավ, Ղազարոսն արդեն մահացել էր: Մարիամը վազեց Հիսուսի մոտ, ընկավ Նրա ոտքերը և լաց եղավ: Երբ Հիսուսը տեսավ, որ Մարիամը լաց էր լինում, «իր հոգովը խռովեց և հուզվեց» (Հովհաննես ԺԱ.33, 35):

Դա մեր պարտականությունն է: Մենք պետք է ինքներս զգանք և տեսնենք, և այնուհետև օգնենք Երկնային Հոր բոլոր զավակներին զգալ և տեսնել և իմանալ, որ մեր Փրկիչը ոչ միայն Իր վրա է վերցրել մեր բոլոր մեղքերը, այլ նաև մեր ցավերը և մեր տառապանքները և չարչարանքները, որպեսզի կարողանար իմանալ, թե ինչ ենք մենք զգում, և թե ինչպես մխիթարեր մեզ»:[5]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սուրբ գրքերի ուղեցույց, «Կարեկցանք»:
2. Thomas S. Monson, "The Gift of Compassion," *Liahona,* Mar. 2007, 4–5, 8.
3. Լինդա Շ. Ռիվս, «Տերը մեզ չի մոռացել», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2012, 119:
4. Լինդա Շ. Ռիվս, «Տերը մեզ չի մոռացել», 118:
5. Լինդա Շ. Ռիվս, «Տերը մեզ չի մոռացել», 120:

Խորհեք այս մասին

Ո՞վ կարող է օրհնվել ձեր կարեկցանքի շնորհիվ:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15:
Թարգմանության հաստատումը. 6/15: *Visiting Teaching Message, December 2015*-ի թարգմանությունը: Armenian 12592 201